ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

դեկտեմբերի 2020 թվականի № Ա
ք. Երևան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի նոյեմբերի 30-ի №379Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պարտավորեցվել է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը կնքել բաժանորդների հետ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրեր,

բ) Ընկերությունը չի դիմել Հանձնաժողով Որոշմամբ սահմանված ժամկետը երկարաձգելու համար և չի հայտնել Որոշմամբ ստանձնած պարտավորությունը կատարելու մասին,

գ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2020 թվականի դեկտեմբերի 8-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Որոշմամբ ամրագրված ժամկետում դրանով սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերին համապատասխան պայմանագրերի կնքման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունն իր 2020 թվականի դեկտեմբերի 15-ի №ՍԾ/27445 գրությամբ (մուտքագրվել է հանձնաժողով սույն թվականի դեկտեմբերի 16-ին) հայտնել է, որ ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքել է

խմելու ջրի սպառում ունեցող 519.583 բաժանորդների հետ, ինչն էլ կազմում է տվյալների բազայում գրանցված ակտիվ 644.782 բաժանորդների շուրջ 80,6 տոկոսը: Ընկերությունը պնդել է, որ Որոշմամբ սահմանված ժամկետում պայմանագրերի կնքման գործընթացն ամբողջությամբ ավարտին չի հասցրել Ընկերության կողմից անկախ հանգամաքների և այլ օբյեկտիվ պատճառների հետևանքով՝ որպես այդպիսիք մատնանշելով՝ բաժանորդների հասցեից բացակայությունը (իսկ ընտանիքի անդամները չունեն համապատասխան լիազորություններ), անշարժ գույքը ոչ պատշաճ կարգով վարձակալությամբ տրված լինելը (իսկ վարձակալները չունեն պայմանագիր կնքելու լիազորություններ), սեփականությունը հավաստող փաստաթղթերի բացակայությունը (տան սեփականատերը մահացած է, իսկ ժառանգները չեն կատարել օրենքով նախատեսված գործողությունները), կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածմամբ երկրում ստեղծված իրավիճակը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298Ն որոշմամբ հայտարարված արտակարգ դրությունը, կարանտինը, դրանց արդյունքում Ընկերության աշխատակիցների աշխատանքի հեռավար կազմակերպումը, մի շարք աշխատակիցների հիվանդանալը և մեկուսացված լինելը, Ընկերության և ոչ բնակիչ բաժանորդների գործունեության սահմանափակումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի №1586Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրության պայմաններում՝ Ընկերության մի շարք արական սեռի ներկայացուցիչների կամավորագրումը: Նշվածից ելնելով՝ Ընկերությունը խնդրել է կարճել հարուցված վարչական վարույթը և համապատասխան պայմանագրերի կնքման համար սահմանված ժամկետը երկարաձգել մեկ տարի ժամկետով,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշմամբ ամրագրված պահանջը՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը չի կնքել բաժանորդների հետ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերը և մինչև հիշյալ ժամկետի ավարտը չի դիմել Հանձնաժողով՝ այն երկարաձգելու համար: Ինչ վերաբերում է Ընկերության հիմնավորումներին, ապա դրանք չեն կարող դիտվել որպես հիշյալ գործողությունների չկատարման օբյեկտիվ պատճառ և հիմք հանդիսանալ Ընկերության նկատմամբ պատասխանատվություն չկիրառելու համար, քանի որ վերջինիս կողմից մատնանշած հանգամանքները որևէ կերպ չէին կարող Ընկերությանը զրկել մինչև

դեկտեմբերի 1-ը՝ պայմանագրերի կնքման ժամկետի ավարտը, այդ ժամկետի երկարաձգման համար Հանձնաժողով դիմելու հնարավորությունից: Ավելին, Որոշմամբ սահմանված պայմանագրերի կնքման ժամկետը մի քանի անգամ երկարաձգվել է առանց պատասխանատվության միջոցի կիրառման՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը պատշաճ կարգով նախապես՝ մինչև ժամկետի ավարտը դիմել է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ, և

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Որոշման խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում, Որոշմամբ սահմանված օրինակելի ձևին համապատասխան բաժանորդների հետ կնքել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատակարարման պայմանագրերը՝ այդ մասին տեղեկացնելով Հանձնաժողովին:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
դեկտեմբերի 2020թ.